


- » ը. բայց Մարկեղոս յետոյ ընդ Սեպե-
- կիոյ — Աբրահամի Ժողովոյն
- 105. զ. (Սուրբ) Եպիսկոպոսն
- » Կ. և խոսովութիւնն ոչ սակաւ լինէր
- ի նոսա:



ՄԵՏ՝ ՍՈՒՐԱՏԻ Ս. ԷՋՄԻԱՏՆԻ

եմ

ԵՐՈՒՍԱԴԷՄԻ Ս. ՅԱԿՈՎԸԵԱՆՅ ՎԱՆՔԻ ԶԵՆԱԳՐԵՐԸ.

Գերապատիւ Սահակ Եպիսկոպոսի տպած Սոկրատի և Եր. ձեռ. բաղդատութիւնը մեզ միջոց է տալիս այժմ աւելի որոշ կարծիք յայանել երկու ձեռ. մասին, քան այն որ արդէն յայանել ենք մեր հրատարակութեան յառաջարանում (էջ 147)։ Սրբազանը բաղդատել է Սոկրատի միայն Ա. գիրքը և գտել է 111 տարբերութիւններ՝ բառերի, քերականական ձևերի, նախադասութիւնների, պակաս և աւել մասերի. թէև նա գիտակցօրէն չէ նշանակել «երանուանց ևէն. . . աւելորդ յերբ, յօրերու և նախգիրներու անհաճ կրկնութիւնք . . . բայերու անբերելիութիւնքու և անցեալ ընդունելութեանց անխտիր միմեանց տեղ գործածութիւնք». և, կաւելացնենք մենք. մի շարք տպագրական սխալներ, որ մենք արդէն նշանակել ենք ուղղելիների մէջ (էջ 829) և որ զժրատաբար Սրբազանի ուշադրութիւնից զրիպել են։ Վատարուած բաղդատութիւնը առանձին հետաքրքրութիւն ունի և ամբողջինը աւելի է ցանկալի կացուցանում. յուսանք որ Գեր. Հայրը ներգութիւն յանձն կառնէ մնացեալ վեց գրքերի բաղդատութիւնն էլ տալ, որով մենք թէ Սոկրատի կրկին ձեռագրերի ընթերցուածները կունենանք և թէ այդ առթիւ ևս միջոց կունենամ մի քանի աչքի ընկնող տպագրական սխալներ ուղղելու, որ սպրտել են ճանապարհորդութիւնների պատճառով քանիցս ընդհատուած տպագրութեան մէջ։

Միայն առաջի գիրքը բաղդատելով, Սահակ Եպիսկոպոսը երկու կարևոր եղբակացութիւն է աւնում ա. «Կրկին ձեռագրերը միմեանցից բոլորովին տարբեր օրինակներէ արտագրուած են» և .ք. «Երուսաղէմիւնը աւելի վտահալի և ընտիր օրինակ է Լեզուի օրինաց համեմայն ընթերցուածովք»։ Երկու եղբակացութիւններն էլ որոշ չափով ուղիղ

են. բայց ոչ վերջնական, մանաւանդ առաջինը։ Սրբազանի տարբեր օրինակները նորից ամենայն զգուշութեամբ բաղդատեցինք մեր ձեռագրի տպագրի և յոյն բնագրի հետ և հետեւեալ խմբերն ըստացանք։

ա. Եր. ձեռ. անպայման ուղիղ է համեմատած յոյն բնագրի հետ հետեւեալ դէպքերում. 11, ի հասանէր իրն. 12, ա նոցա. գ որք. գ միոյ. մե Աքիւզասայ. 13, ա Աքիւզասայ. ի ունէին. 14, ա ողւով. 15, ժ քրիստովնէից. մե. 16, ժ թէև սխալ է «եպիստոսացիք», պէտք է լինէր «(ի) պիստոսացիք». 18, ժր. թէոզնիս. 20, և թէև «համեմատութիւն» բառը այնքան էլ ուղիղ չէ երևում. 24, ժգ. ձեռնագրութիւնս առնել. 25, ժգ. ընդ Հրէից. մե, որք ի սկզբանէ. իր. ժողովն ի բաց ընկեաց քարոզութիւն, ոչ միայն. 26, ժգ. սուրբ լի. 29, և զստուգութիւն. ժր. Այէտի. 32, ա իսկ պարկեշտութիւն կոչէր և զաւրինաւքն ամուսնութեան մերձաւորութիւն. 35, թ զարդն. 40, թ շտղացդ լի. 42, թ զմանգունսն. և ընդաւալ լինէր. գ ի համակարգութեանն. 46, գ զՔրիստոսին. թ զտեղին. 47, և նախագրէ. 49, թ իսկ զբեռոսն որք ի ձեռին Քրիստոսի ի խաչին ցցեցան. 50, ա մատուցանէր . . . շնորհեալ էր. 56, գ Հայոց լի. 57, թ այս. 58, և տուեալ ընծայ իւրեանց թագաւորին մատուցանէին. 59, դ յաշխարհս Հոռովմայեցիս վաճառականս . . . եթէ զոր ուրեք. և առանձին առ ի քրիստովնէական աղաթ կատարել. մե ի Տիւրոն 60, թ ծանուցանէր. մե քահանայութեան. 64, և զաստուածսն. 65, և զամենայն զորս ընդ իւր և Վրացիս կոչէ զպատահմունսն զառ ի բժշկութիւն մանգանն և կնոջն. ժր. Հոռովէացոց. 68, և բարեբերութիւնք. 69, գ Մանիքեա. 72, թ զարժան դագաստանն. 75, և ի մատնութեանն. 76, և առ ընթեան. ժ խոստովան լինէր. 77, դ չարափառութիւնն. ժգ. էութիւնսն. 79, ժա սմանց. ժգ. մերձեալ. 82, ժ զնա դէմ յանդիման. 91, մե ոչ գիտեմ . . . առեալ. 92, ժգ. գիտաց. 94, թ քան զոր. 98, ա անուանց ձևերը Եր. ձեռ. ուղիղ են. 100, դ ոմամբ. 102, և Տրիբոսիգա. 103, գ ի Մովսիսէ. 104, ա յայնժամ և որոց Սերէոսին ի Վոստանդնուպաւլիս եկելոց. գ ոչ ձեռնարկէ. և ընկեաց. 105, գ սուրբ լի։

Աւրեմն 111-ից 64 անգամ բնագրի համեմայն ուղիղ է աւելի քան կէտը։

Մեր ձեռագիրն է ուղիղ դարձեալ յուն. բընագրի համեմատութեամբ. 20, մե յոյնն է՝ «ընդարձակ հանեալ», թարգմանել է՝ «ընդարձակեալ

1. Թեև ևս մտայիւր եմ արդէն ուղիղու այդ սրբայինքը մօտիկ տպագայում։

1. Տես նախընթաց համեմատութիւնը էջ  
2. Տես համեմատութեան ծանօտութիւնը։

Հանեալս. 21, զ, Հերակղիա Թուակա. 29, ժա,  
այլ յԱստուծոյ. ժր նշանակեալ կրեցին. 30, ա,  
Պափնութիւնէ. զ, վերաւորիւր ակնն. 33, բ, ի քա-  
ղաքացն Կիպրոսի. 36, ե, նոր Թեոզոսի. 37, ե,  
այժմ ածեալ. բ, ի մահուանէ. մե, բերէ մեզ նե-  
րումն (տես Սոկր. էջ 929). 41, ե, յոյն բն. «ի  
վիճակ ընկալաւ զաթոս». 44, զ, միայն պէտք է  
կարգալ՝ «յասպարիսի նորին քաղաքիս», 54, ժր, որ-  
պէս և Մովսէս յանապատին առնէր. 55, զ, զկո-  
չեցեալն. 78, զ. 80, ժ, պատմեցից. 93, ե, հրա-  
մայեաց ... տան. 101, զ, Աղամանգայ. զ, յա-  
փշտակելով. 103, մե, հակառակ նոցա կամելով.

Աւրեմն ընդամենը 21 անգամ, որոնցից մի-  
այն մի քանիսն են անպայման ընտիր ընթերցուած-  
ներ, մինչդեռ եր. բոլորն էլ լաւ են և գերազանելի.  
Գ. Աստիածելի և երկուսն էլ հնարաւոր են  
ըստ յոյն բնագրի հետեւեալ գէպքերում. 12, ժր.  
24, բ. 42, բ. Այստեղ վերջի մեծ նախադասու-  
թիւնը չկայ բնագրում. 44, բ. 50, բ. այս նախա-  
դասութիւնն էլ չկայ բն. 53, զ. 58, զ. բնագիրն  
ունի՝ «պզգակից մանկունս». 67, ժգ. 68, զ, բ. 84,  
ա. 94, զ. 95, ժգ. 104, բ. Աւրեմն 14 անգամ.

Գ. Տպագրական սխալներ են. չուղղուած՝ 18,  
ժգ. 66, բ. 72, ժգ և արդէն ուղղուած՝ 36, զ, ժգ.  
42, ժա. 64, զ, ժգ. 88, ժա: Աւրեմն 9 անգամ.

Ե. 2, զ, ժգ, մե դանուում են այն հատուածի  
մէջ, որ առեւ լամ «Արշալոյս Արարտեանս» թեր-  
թից, իսկ սա էլ առեւ է Երուսաղէմի ձեռագրից.  
Աւրեմն մի երես արտագրութեան մէջ նոյն եր. ձեռ.  
երեք սխալ են մտել.

Պարզ է որ երկու ձեռագրերի միջի կապը ու-  
րոշելու համար կարող են հինգ կէտից միայն ա-  
ռաջի երկուսն ինկատի առնուիլ, եթէ մեր ձեռ,  
բ. կէտում նշանակած տարրերութիւնները չլինէին,  
կարելի էր պնդել որ նա արտագրուած է եր. ձե-  
ռագրից, հակառակը լինել չէ կարող, բայց դրա  
փոխարէն համարեա հաստատուպէս կարող ենք պն-  
դել որ երկուսն էլ միեւնոյն, կամ յոյրոյին յար և  
նման ձեռագրից են արագրուած. Երաւս. ձեռ. ա-  
ւելի լաւ, ընտիր գրչի ձեռքով, իսկ մերը անհա-  
մեմատ թոյլ գրչից, Այս եզրակացութիւնը մենք  
անում ենք ի նկատի առնելով տարրերութիւնների  
յատկութիւնները. նոցա մեծ մասը կայանում է  
նրանում, որ եր. աւելի աստի ունի կամ աւելի  
ուղիղն ասած այնքան բառեր չունի բաց թողած  
ինչքան մեր ձեռ. մի հանգամանք որ կը բացազրուի  
մեր ձեռ. գրչի անուշադրութեամբ և ագիտու-  
թեամբ. համեմատել օրինակի համար 12, մե, և  
13, ա.: Հաս քիչ են տարրերութեան այնպիսի օ-  
րինակներ, երբ նոյն միտքը տարրեր բառերով է ար-

տայայտուած, որով կարելի լինէր ասել թէ ձեռա-  
գրերից մէկը կամ միւսը ներկայացուցիչ է մի  
յայտնի՝ զիտակցօրէն փոփոխուած նախատիպի  
ինչպէս օրինակի համար այդ տեսնում ենք Փոքր  
Ստիրատի ձեռագրերի մէջ (տ. յառ. ԷԵ), Յայտնի  
աչքի ընկնող օրինակները, երբ նոյն մտքի համար  
սարքեր բառեր են գործածուած, այն էլ ամէն անգամ  
միայն մի մի բառ՝ սորա են. 24, ժգ. 35, բ. 37, բ.  
41, ե. 42, ի. 44, բ և 72, բ, որոնցից և ոչ մի օ-  
րինակը այնքան նշանաւոր չէ որ հնարաւոր կա-  
ցուցանէր երկու իմբերի ընդունելութիւնը, եթէ  
միւս գրքերի բաղդատութիւնն էլ ունենանք գոյցէ  
երևան դան աչքի ընկնող կէտեր, բայց առ այժմ  
զեռ չունինք այդ, և ձեռագրի մի քանի աւել կամ  
պակաս բառերը զեռ ապացոյց չեն՝ թէ նոքա նոյն  
օրինակից չեն. ի հարկէ մեր ենթադրութեան այն  
մասը թէ արդեւ, ք. եր. և էջ. ձեռ. միմեանցից արտա-  
գրուած չեն (յառ. ԻԿ.) արդէն անհիմն է դարձել.

Մի նշանաւոր թերութիւն կայ մեր ձեռ. մէջ,  
որ շատ կարող էր նպաստել ընդհանուր նախատիպը  
զանելուն. նրա մէջ մի թերթ մտքուր է թողնուած՝  
էջ 371—372-ի մէջ (տպ. 615—619),՝ որովհետեւ  
նախատիպի մէջ ուղիղ այդքան պակասում էր և  
գրիչը այդ իմանալով ազատ թերթ է թողել յետոյ  
լրացնելու յոյսով և ընդմիջտ այդպէս էլ մնացել  
իսկ մենք ստիպուած եղանք բնագրից թարգմանել,  
Հետաքրքիր է իմանալ, արդեւ, կայ նոյն թերու-  
թիւնը եր. ձեռ. մէջ թէ ոչ, եթէ այդ այդպէս  
լինէր, կայացուցուէր երկու ձեռ. շատ մօտ կապը,  
թէ և տունց այդ էլ, ինչպէս տեսանք, միմեանցից  
շատ հեռու չեն.

Աւրեմն առ այժմ Սահակ Սրբազանի յայտ-  
նած կարծիքների մասին կարող ենք ասել. ուղիղ է  
որ եր. ձեռ. աւելի ընտիր օրինակ է, բայց մեր  
ձեռագրից տարրեր նախատիպ չունի, Բացի այդ՝  
նրա տուած համեմատութիւնից ստորում ենք մի  
նշանաւոր և հետաքրքիր բան, թէ թարգմանութեան  
շատ սխալները և թերութիւնները արտագրողնե-  
րինն է և ոչ թարգմանչինը.

Մեարդու Վարդապետ.

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ ՊԵՏՄԵՆԸ ՎԵՊԵՆՆՈՒԹԵՆ.

Արարատ, ամսագրի ներկայ թուակա-  
նիս ապրիլ համարում մենք հրատարակեցինք  
Գրիգոր Խլաթեցու (+1425) անտիպ երկե-

1. Shu hil k'rms. Սոկ. յառ. էջ մե. ձե. 1:

1. ա. Սոկր. յառ. Ի. ԵԼ.